

ԼԵԶՈՒԱԲԱՆՆ ՈՒ ԼԵԶՈՒԻՄԱՏՏԱՍԷՐԸ¹

Նիկոլ² Աղբալեանի ծննդեան 150-ամեակին ընդառաջ*

Բանալի բառեր – Աղբալեան, լեզուաբան, հայերէնի հին ու նոր հնչիւնները, հայերէնի հնչիւնների մասին նոր տեսակէտ, բարբառների շեշտը, ուրարտերէն, հայերէն, բառերի ծագում եւ ստուգաբանութիւն:

Մուտք

2023 թուականին լրանում է Նիկոլ Աղբալեանի 150-ամեակը, եւ առաջին անգամ ակադեմական հրատարակութեամբ ուսում-

1 Յաւելածի ուղղագրութիւնը՝ ըստ դասական ուղղագրութեան կանոնարկման համար որդեգրած առաջնորդող սկզբունքների, որոնք փաստագրուած են հնագոյն ձեռագիր վկայութիւններով եւ հիմնաւորուած ու շարադրուած են հեղինակիս «Երբ յայտածուում է մաշտոցեան տրամաբանութիւնը» (2018) գրքում: Սկզբունքային այս մատեցման առանցքային նպատակն է հայերէնի բոլոր լեզուալիճակների՝ գրաբարի, արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի համար ապահովել ուղղագրական մեկ համարիւնակ՝ մաշտոցեան նախարհնակը: **Սէջբերումների ուղղագրութիւնը պահպանուել է:**

2 Սկզբունքային լինելու դէպքում փոխառեալ բառերում Լ հնչիւնը պէտք է գրել Ղ-ով: Մաշտոցն ու նրա աշակերտները յունարէնից, դատիներէնից եւ այլ լեզուներից փոխառեալ բառերում եւ անուններում հնչող Լ-ն տառադարձել են մեր այբուբենի Ղ-ով, ոչ թե Լ-ով, այսինքն՝ չ-ի եւ Ի-ի հայերէն համարժէքը Ղ-ն է՝ Ազաթանգեղոս, Ղեւոնդ, Բարսեղ, Ղուկաս, Եղիսաբեթ, Հեղինէ, Նիկողայոս, Պղատոն, Սողոմոն, Երուսաղէմ, Բեթղէմ, Պաղեստին, Պաղոս, Ղովտ, Իտաղիա, Կղեպատրա, Աղեքսանդր, Ողիմպոս, Գողգոթա, մետաղ, կանթեղ, բիրեղ, կաղամար, կաղամբ, պողոտայ, պողովատ (պողպատ), մեղեղի, աբեղայ, սաղմոս, եղեկտրոն եւ այլն: Հետեւաբար՝ նաեւ Ղէոնարդո, Միքեղանգեղո, Ղոս-Անգեղոս (Los-Angeles) եւ այլն: Նիկողայոս Աղոնցի, Նիկողայոս Մառի անունների կողքին նաեւ Աղբալեանի անունը պէտք է գրել Ղ-ով՝ Նիկոլ: Ազգանունը կազմող «Աղբալ» անունն ծագումը Աճառեանը կապում է կամ արաբերէնի, կամ թուրքերէնի հետ. առաջինում «բախտատրութիւն, բարեբախտութիւն» է նշանակում, երկրորդում՝ «սպիտակ մեղր» (տե՛ս **Աճառեան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա., Եր., 1942, էջ 101): Ուստի որպէս փոխառութիւն՝ այն նոյնպէս հարկ էր գրել Ղ-ով՝ Աղբաղեան, սակայն առայժմ խուսափենք առանց այդ էլ ուղղագրութեան վրայ ակամայ սեւեռող յարուածով բուն նիւթից ուշադրութիւնն առաւել շեղելուց: Իսկ Լ-Ղ հարցի ուսումնասիրութեան պատմութիւնից տե՛ս **Սնաբուհեան Մետրոպ վրդ., Եղանիմ** բայի կրած փոփոխութիւնները, «Արարատ», Էջմիածին, 1915, N Բ-Գ, էջ 248-253, **Աճառեան Հ.**, Երբ Լ դարձավ Ղ, «Տեղեկագիր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի», Եր., 1948, էջ 33-40, **Մկայան Է.**, Հայերենի հնչույթային համակարգի պատմությունից, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 1961, N Բ, էջ 67-90, **Մուրադյան Հ.**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հատ. Ա. Հնչյունաբանություն, Եր., 1982, էջ 204-217, **Գյուլբուդաղյան Ս.**, Հայերենի ուղղագրության պատմություն, Եր., 1973, էջ 17-22:

* Ընդունուել է տպագրութեան 12.08.2022:

նասիրողի սեղանին է դրուելու նրա երկերի լիակատար ժողովածոյի լեզուաբանական ուսումնասիրութիւններն ամփոփող հատորը, որ մեծագոյն պատասխանատուութեամբ եւ գիտական բժախնդրութեամբ հրատարակութեան է պատրաստում, ծանաթագրում, բառարաններն ու անուանացանկերը կազմում, ինչպէս նա եւ առաջաբանն է գրում յաւդուածագիրս:

Գրականագէտ, մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ Նիկոլ Աղբալեանի բանասիրական, լեզուաբանական ժառանգութիւնը յանիրաւի քիչ է ուսումնասիրուած, եթէ չասենք, որ գրեթէ դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրութիւնից: Մինչդեռ այդպիսի ³ բանասէրը, համեմատական լեզուաբանութեան ռահվիրայներից ⁴ մեկը, ճշմարիտ հայկաբանը իր ուսումնասիրութիւններով շատ լուրջ դիտարկումներ ու հարցադրումներ է անում եւ խնդիրները լուծելու սկզբունքային կերպաբանութիւն կիրարկում՝ արձանագրելով հիմնարար ու անշրջանցելի արդիւնքներ, որոնք այսար եւս ոչ միայն աւգտակար, այլ եւ ուղղորդ կարող են լինել՝ ունենալով տրամաբանական ամուր հիմք:

Ինչպէս պարզուում է Նիկոլ Աղբալեանի նամակներից, 1920-ական թուականներից նա լրջաւրէն տարուած էր հայոց լեզուի մասին «գիտերով»: Համեմատական լեզուաբանութիւնն իր ճանապարհին էր հարթում որպէս արդէն իր սկզբունքները ձգարտած լուրջ գիտակարգ, եւ Աղբալեանն այդ ճանապարհին առաջինը ոտք դրած հայ լեզուաբաններից էր: Նրա աշխատութիւնները տպագրուել են 1926 թուականից, հիմնականում «Հայրենիք» (Բոստոն), «Սիոն» (Երուսաղեմ), «Բագմավէպ» (Վենետիկ), «Հանդէս ամսաւրեայ» (Վիեննա) ամսագրերում: Իր յաւդուածներում նա հիմնաւորապէս անդրադարձել է հայերէնի հնչիւնաբանութեանը, բարբառների շեշտին, շեշտից կախուած պատմական հնչիւնափոխութեանն ու դրա

3 Այլ, գայլ, փայլ, սայլ, նշոյլ, բոյլ, թոյլ եւ մի շարք այլ բառերի ձեռագիր հնագոյն վկայութիւնները հաւաստում են, որ դրանց նախնական հաւատարմագոյն ձեւերը եղել են դ-ով՝ թերեւս [լ] հնչմամբ՝ այլ, գայլ, փայլ, սայլ, բոյլ, նշոյլ, թոյլ եւ այլն: Այսար էլ ունենք բառագոյգեր, որոնց եզրերից մեկը պահպանել է իր հնագոյն ձեւը՝ մառախուղ – մառախլապատ, աղ – անալի, խուղ – խլանալ, ցիղ – ցիլ եւ այլն: Այլ, գայլ, փայլ եւ նշուած մեւս բառերի ստուգաբանութեան ժամանակ Աձառեանը յիշեցնում է դրանց հնագոյն ձեւերը՝ Դ-ով:

4 Ինչո՞ւ ռահվիրայներ: Վերջաւորութիւնները երկրորդական ձեւակազմական ձեւոյթներ են, որոնք աւելանում են բառի հիմքին: Դրանց թուում է նա եւ որոշիչ յաւղը: Անտրամաբանական է գրել **արքայ**, բայց **արքան**, **երեկոյ**, բայց **երեկոն**: Ո՞ւր կորաւ յ-ն, որն այդ դիրքում միշտ կայուն է: Հնչեցնել-չհնչեցնելը մեր գործն է, բայց բառն իր ձեւը չի կարող փոխել (խաւսքը ամանդական, առաւել եւս մաշտոցեան ուղղագրութեան մասին է): Ուրեմն՝ ռահվիրայներ, բրածոյներ եւ այլն:

հետեւանքով առաջացած բարբառային տարբերակներին, որոնցով հայկական տարբեր ցեղախմբերից ազգի ձեւաւորման փուլում համալրուել է հայոց լեզուն՝ փոխառելով նշանակութեամբ տարբեր, բայց միեւնոյն ծագման բառեր, ինչպիսիք են, արինակ, «հատ»-ը եւ «հաց»-ը: Նիկոլ Աղբալեանը առանձնայատուկ ուշադրութիւն է դարձրել պարզ ու բաղադրեալ ձայներին՝ արինակներով հիմնաւորապէս ցոյց տալով, որ լեզուում կան առաւել հին եւ համեմատաբար նոր բաղաձայններ, եւ վերջիններս առաջացել են այն ժամանակ, երբ բառի շեշտազրկուած ձայնաւորի կորստեան պատճառով երկու պարզ բաղաձայններ յայտնուել են կողք կողքի, ապա՝ միաձուլուել, ինչպէս՝ արտասուք>արտսուք>արցուք (արցունք), պատասխանի>պատսխանի>պացխան>պացխուն եւ այլն:

Մեծ ու կարեւոր բաժին են կազմում Աղբալեանի բառաստուգաբանութիւնները, որոնք, հիմնուելով, իր իսկ ճշմարիտ բնորոշմամբ, «բոլորովին նոր տեսութեան» վրայ, ոչ միայն լրացնում են այդ լեզուաբանների ստուգաբանական քննութիւններն ու վարկածները, այդ եւ յաճախ հակադրուում են դրանց եւ հիմնաւորում իր առաջարկած դիտողութիւնները՝ նոր մատեցմամբ:

1937-1942 թթ. Բէրլինում⁵ հրատարակուեց Աղբալեանի «Բանասէրի յուշագիրը» մատենաշարը երկու գրքով՝ քսաներկու պրակներով: Ի դէպ, նշենք, որ մատենագիտական ցանկերում, ինչպէս եւ 2005 թուականին Աղբալեանի 130-ամեակի առթիւ Գառնիկ Անանեանի⁶ կազմած ժողովածոյում եւս յիշատակուում է «Բանասէրի յուշագիրը» աշխատութիւնը՝ իր տասներկու պրակներով, հրատարակուած 1937-1938 թուականներին: Պարզուում է, որ 1938-1942 թուականների ընթացքում լոյս է տեսել «Բանասէրի յուշագիրը» աշխատութեան երկրորդ գիրքը՝ եւս տասը պրակով, որում հեղինակը շարունակել է լեզուաբանական համակարգային ուսումնասիրութիւնները:

5 Անհնար է «էյ» կապակցութիւնը, որ ինքնին հաւասար է «էյ», քանի որ որեւէ դիրքում հնչող [էյ] = «է»: Ուրեմն՝ Սերգ[էյ] = Սերգէ, թ[էյ] = թէ (tey), Անդր[էյ] = Անդրէ, Պ[էյ]րութ = Պէրութ եւ այլն (տես Աւետիսեան Լ., Երբ յայտնածուում է մաշտոցեան տրամաբանութիւնը, Եր., 2018, էջ 58):

6 **Գառնիկ Անանեան** (1934-2007) – հայ գրականագէտ, հրապարակախաւս, բանասիրական գիտութիւնների դոկտոր, Երևանի պետական համալսարանի լրագրութեան բաժանմունքի հիմնադիր ղեկավար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԽՍՀՄ գրողների միութեան անդամ:

Ա. Լեզուաբանի որոնումները

Վերադառնալով նիւթին՝ արձանագրենք, որ լեզուական իրողութիւնները շուրջ քսան տարի զբաղեցրել են Աղբալեանի միտքն ու ուշադրութիւնը, եւ նա հնագէտի ինքնամոռացութեամբ ու բժախնդրութեամբ, բնականօրէն խորագիտութեամբ եւ համադրողական մտածողութեամբ ձեռնամուխ է եղել բացայայտելու շատ հարցերի պատասխաններ եւ պեղել իրաւամբ արժէքաւոր բրածոյնէր⁷ որպէս հայի լեզուամտածողութեան նախանիւթ եւ «ոգեպաշտ» հայերէնի շինանիւթ: Ի դէպ, Աղբալեանի ուրոյն լեզուիմաստասիրութիւնը համոզիչ կերպով ցոյց է տալիս, որ լեզուն մեկ անգամ ընդմիջտ տրուած միջոց է, եւ եթէ անգամ փորձում ենք մեր միտքն արտայայտել, մի եւ նոյն է, այն կաղապարում է հազարամեակներ առաջ ապրած մեր նախնու պատկերացմամբ եւ ոչ երբեք այդ կերպ: Եւ եթէ լեզուն արտաքին ձեւական զարգացումներ է ապրել, կրել մեծ ու փոքր փոփոխութիւններ, ապա իմաստային-էութենական ոչ մի փոփոխութիւն չի կրել: Եւ մեր միջոցով մեր կամքից անկախ, յետընթաց ապրած մեր գիտակցութեան աստիճանին չիջնելով, դարձեալ մեր նախնին է իր հաղորդութեան եւ ոգեպաշտութեան ծէսերը կատարում: Ահա այն հատուածը, որտեղ լեզուի փիլիսոփայ Աղբալեանը խաւսում է լեզուի ոգեպաշտութեան մասին, որ նախնիների ոգեպաշտ այդ լեզուն զարեղ է մեր մտածողութիւնն իր գերութեան մէջ յաւերժ պահելու աստիճան. «Հին մարդկութիւնը բռնած պահում է նոր մարդու իմացութիւնը լեզուի արքանով, որ վաղեմի ժառանգութիւն է. նա իր նախնական մտայնութիւնը պարտադրում է մեզ: Երբեմն մարդ ամէն ինչի վերագրում էր շունչ ու կենդանութիւն. ոգեպաշտիկ շրջանն է դա (animisme). այսօր մենք այդ վաղեմի մտայնութեան գերին ենք լեզուապէս եւ այդ գերութիւնից ազատում չունինք: Հին մտածումը շունչ ու կենդանութիւն էր վերագրում բովանդակ տիեզերքին. այդ մտայնութիւնը մտած է լեզուի կառոյցի մէջ եւ իշխում է մինչեւ այսօր. «ջուրը վազում է, հոսում է», «փուշը ծակում է» եւ այլն ասում ենք մենք, իբր թէ ջուր ու փուշ կամեցող արարածներ լինէին, որ կարող են վազել ու ծակել:

7 Բացատրութիւնը, թե ինչու «բրածոյնէր» եւ ոչ «բրածոներ», տրուած է 4-րդ ծանաթագրութեամբ:

Այդպէս ենք ասում եւ ուրիշ կերպ ասել չենք կարող, այդպէս է պահանջում լեզուի կառոյցը, որ կազմուած է շատ հին ժամանակ: Մեր իմացութիւնն, իբր իմացութիւն, վաղուց թողած է հին մտայնութեան խանձարուրը, բայց հնար չունի խորտակելու այդ մտայնութեան մշակած լեզուական ձեւերը. **մենք իրապաշտ ենք, իսկ լեզուն մտածում է իբր ոգեպաշտ**: Այդ իսկ պատճառով լեզուական ձեւերը մեռած են մեզ համար եւ չունին ներքին իմաստ ու պատկեր, եւ երբ ասում ենք «փուշը նրա ձեռը ծակեց», բնաւ չենք մտածում թե փուշը մի կամեցող արարած է, որ կարող է ծակել կամ չծակել, ինչպէս կարծում էր հին ոգեպաշտ մարդը»⁸:

Իր հարազատ տարերքներից մեկը յայտնաբերած լինելու, լեզուաբանական իր որոնումների, հնչիւնաբանական, բառաքննական նոր տեսութիւն ու կերպաբանութիւն (methodology) առաջարկելու մասին նա խաւսում է 1927 թ. յունուարին «Հայրենիք» արաթերթի եւ «Հայրենիք» ամսագրի խմբագիր Ռուբէն Դարբինեանին⁹ յղած մի նամակում, որում երեւում է նման գործունէութեան հանդէպ եւս պատասխանատուութեան մեծ զգացում ունեցող ձշմարիտ գիտնականը. «Միտքս զբաղուած է լեզուական խնդիրներով.... Պէտք է ասեն, որ յղացել եմ **բոլորովին նոր տեսութիւն** (ընդգծումը մերն է – Լ. Ա.) մեր լեզուի հնչիւնաբանութեան մասին: Հազարաւոր դիտողութիւններ ունեն, որ հաւանօրէն շուտով կարգի կը բերեն: Գործը դժուար է: Ամէն բառ մի գիրք է, որ պէտք է կարդալ իմանալ: **Ես գտել եմ կարդալու գաղտնիքը, բայց ուրիշներին յայտնելուց առաջ պէտք է ստուգեն հայոց լեզուի բովանդակ տարածութեան վրայ** (ընդգծումը մերն է – Լ. Ա.), այսինքն՝ հայ բառամթերքի, որ աւելի քան

8 **Աղբալեան Ն.**, Բանասերի յուշագիրը, հատ. Ա., պրակ է., Պէրոս, 1937-1938, էջ 121-122:

9 **Ռուբէն Դարբինեան** (իսկական անուն-ազգանունը՝ Արտաշէս Չիլինգարեան, 1883-1968) – հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ կուսակցութեան անդամ: Աշխատակցել է կովկասահայ մամուլին («Մշակ», «Մուրճ»), տպագրել գիտական, քաղաքական, արուեստաբանական յարուածներ: 1906 թուականից կատարել է կուսակցական աշխատանք: Ակտիւարէն մասնակցել է «Փոթորիկ» խմբի աշխատանքներին, 1906 թ.: Էջմիածնում գումարուած Ազգային ընդհանուր ժողովին: 1909 թ., խուսափելով ցարական իշխանութիւնների հետապնդումներից, հաստատուել է Կոստանդնուպոլսում, աշխատակցել «Ազատամարտին»: 1913 թ. գործել է Վերմանիայում (հետապնդումներից եւ ամբաստանութիւններից խուսափելու համար ձեռք է բերել անձնագիր **Ռուբէն Դարբինեան** անուն-ազգանունով, եւ մինչեւ կեանքի վերջ կրել այդ անուն-ազգանունը): Աւժանդակել է գերմանա-հայկական ընկերութեան ստեղծմանը: 1914 թուականից յետոյ աշխատել է Տիֆլիսում, Բագուում (մինչեւ 1916 թուականը եղել է «Արեւ» արաթերթի խմբագիրը): 1917 թուականից հրատարակել է «Գործ» ամսագիրը (Բագու): 1917 թ. եղել է Հայոց ազգային խորհրդի քարտուղար, 1920 թ. Հայաստանի Հանրապետութեան արդարադատութեան նախարար: Խորհրդային իշխանութեան հաստատումից յետոյ ձերբակալուել է, մինչեւ 1921 թ. փետրուարը՝ մնացել բանտում: Փետրուարեան ապստամբութեան պարտութիւնից յետոյ (1921) անցել է Թեհրան, ապա՝ ԱՄՆ (Բոստոն), որտեղ խմբագրել է «Հայրենիք» արաթերթը եւ համանուն ամսագիրը, գրել պատմագիտական կարեւոր յարուածներ:

200.000 է (գաւառականով միասին), եւ հայ քերականութեան, որ գրաբար է, աշխարհաբար եւ բարբառական»¹⁰: Նամակի տողերը շաղկապող պատկառազդու համեստութիւնը, գիտարարի մանկական խանդավառութիւնն ու հրճուանքը, մեծութեանը յատուկ մանկական անինքնավստահութիւնն ու արած գործի արժէքն իմանալով հանդերձ դրա մեծութեան հանդէպ թերահաւատութիւնը մարդկայնաւրէն զարդարում են նրա խորագէտ ու խոհուն կերպարը: Երբեմն նա գաւտեպնություն ու խրախոյս էր փնտրում ընկերներից. «Ես ինքս շտապում եմ օր առաջ հրապարակել տեսութիւններս: Գրած եմ գործիս առաջաբանը 50 էջ եւ դեռ անցեալ գարնան ուղարկած եմ «Հանդէս Ամսօրեայ»-ին, բայց տարեկան 6 համարով նա հազիւ կարողանայ իր գրածները լոյս ընծայել: Շանթն ասում էր՝ «Հայրենիք»-ին ուղարկիր, նրա հազարաւոր ընթերցողների մէջ միայն կարող ես գտնել համակիր ու հետեւող եւ՝ ոչ մասնագետների: Չգիտեմ՝ ինչ մտածեմ: Երբեմն ինձ թւում է, որ իմ աշխատանքներին յատկացուած էջերը կորած կարող են համարուել...»¹¹: Մեկ էլ վերստին խանդավառ գիտարարն է խաւսում. «Դու չես կարող երեւակայել, թե ի՛նչ հորիզոններ են բացուում իմ գիտերի շնորհիւ հայերէնի հետազօտութեան բնագաւառում: Իմ գտած օրէնքները քիմիական ռէակցիաներ են, որ կաթեցնում ես բառերի վրայ թե չէ, իսկոյն լուծում են եւ իրենց բաղադրիչ տարրերը երեւան բերում»¹²: Եւ ուղարկելով հանդերձ յաւդուածը՝ այնու ամենայնիւ նրբանկատաւրէն ու հոգատարութեամբ խնդրում է. «Մի բան էլ ասեմ, կը խնդրեմ, եթե յօդուածս յարմար չտեսնես, բնաւ խղճահարութիւն չունենաս չտպագրելու, միայն յետ ուղարկիր ինձ, որ ազատես նորից գրելու աշխատանքից: Ես ինքս գիտեմ, որ այս կարգի գրութիւնները շատ հաճոյքով չեն կարդում, ունքը շինելու տեղ աչքն էլ չհանենք, կամենալով օգտակար լինել «Հայրենիք»-ին՝ չտանք, չվնասենք նրա տարածման: Ուրեմն, մի՛ կարծեր, որ սրտիս ցաւ կը լինի, եթէ ուղարկածս չտպագրուի, բնաւ: Կը գարմանամ, որ տպագրուի: Հիմա դու գիտես»¹³:

10 **ԳԱԹ**, Ն. Աղբալեանի հաւաքածոյ, Գ. 3839-21: Առաջին անգամ հրապարակուել է Գ. Անանեանի կազմած «Ընտրանի» ժողովածոյում (տես **Անանյան Գ.**, Ընտրանի, Եր., 2005, էջ 345):

11 Նոյն տեղում:

12 Նոյն տեղում:

13 Նոյն տեղում, էջ 345-346:

Չափազանց բծախնդիր լինելով իր իւրաքանչիւր ուսումնասիրութեան ծիրում՝ Աղբալեանն իր հնարաւորութիւնների սահմաններում փնտրում-գտնում, ուսումնասիրում էր ժամանակի պատմագիտութեան, լեզուագիտութեան ասպարէզում ի յայտ եկած այն աշխատութիւնները, որոնք լրացուցիչ հիմք կարող էին դառնալ իր եզրայանգումների համար, կուղղորդէին դէպի նոր բացայայտում կամ որպէս փաստարկ կը ծառայէին սեպհական հակափաստարկները ձեւակերպելիս եւ իր հիմնաւոր մատուցումը մատուցելիս:

1926 թ. դեկտեմբերին կնոջը՝ Հրարփիկին գրած մի նամակում կարդում ենք իր համար գրականութիւն հայթայթելու ապսպրանք-խնդրանքը. «Կը խնդրեմ, սիրելիս, անպատճառ ինձ համար ձեռք բերես ռուսերէն լեզուով մի վրացերէնի քերականութիւն եւ մի վրաց-ռուսերէն բառարան: Կայ մի մեծը՝ Չուբինովի¹⁴, բայց հազիւ թէ գտնես, դեռ սրանից 15 տարի առաջ հազուագիւտ էր: Բայց եթէ կարողանաս գտնել, ամենամեծ բարիքն արած կը լինես եւ մեծագոյն ընծան Նոր տարուայ առիթով: Իսկ եթէ Չուբինովի բառարանը չկայ, հաւանական է, որ աւելի փոքր բառարան լինի, դրանից առ: Գալով քերականութեան՝ կարծում եմ՝ հիմա կունենան հրատարակած. չմոռնաս ռուսերէն լեզուով վրացերէն քերականութիւն: Պրոֆ. Մամը մի բարակ, բայց նշանաւոր տետրակ ունի հրատարակած վրացերէն բայերի խոնարհման մասին¹⁵: Աշխատիր գտնել այդ եւս եւ ուղարկել ինձ: Եթէ այս գրքերը շուտ գտնես, մի սպասիր քո գալուն՝ այլ ուղարկիր փոստով, ինձ շատ պէտք են, շատ»¹⁶:

Գիտական գրականութիւն ձեռք բերելու մղումով եւ յոյսով Աղբալեանը նամակներ է գրել տարբեր խմբագրութիւնների, ինչի մասին իմանում ենք կնոջը գրած նոյն նամակից. «Ես անցեալ տարի «Մարտակոչին»¹⁷ մի նամակ գրեցի եւ յայտնելով, թէ երեւի ինձ ճա-

14 Ղաւիթ Չուբինաշուիլի (Չուբինով, 1814-1891) – քարթուելագէտ, վրաց-ռուսերէն առաջին մեծ բառարանի կազմողը, վրացական գրականութեան առաջին գիտապետը (մեր առաջարկած նորաբանութիւնն է *professor* եզրոյթի համար), Ռուսաստանում վրացերէնի համակարգուած ուսումնասիրութեան սկզբնաւորողը:

15 Հաւանաբար նկատի ունի 1908 թուականին ռուսերէն լոյս տեսած փոքրածաւալ հետեւեալ աշխատութիւնը, որի մեծ մասը զբաղեցնում են հոլովման եւ խոնարհման համակարգերի աղիւսակները. Мамр Н., Основные таблицы к II грамматике древне-грузинского языка с предварительным сообщением о родстве грузинского языка с семитическими, СПб., 1908, 22 таблицы, 18 страниц:

16 **ԳԱԹ**, Ն. Աղբալեանի հաւաքածոյ, Գ. 3839-19 (Անանյան Գ., նշ. աշխ., էջ 343-344):

17 «Մարտակոչ» – խորհրդային շրջանի արաբերթ, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանուորական կուսակցութեան Անդրկովկասեան երկրամասային կոմիտէի որդան: Լոյս է տեսել 1923-1927 թուականներին Տփղիսում: Խմբագիրներ՝ Աղեքսանդր Մեանսիկեան, Յարութիւն Սուրխաբեան, Աշոտ Խումարեան, Արամայիս Երզնկեան, Սարգիս Խանոյեան:

նաչողներ կը լինեն խմբագրութեան մէջ՝ խնդրեցի այդ գրքերն ուղարկել ինձ եւ փոխարէնը խոստացայ կա՛մ դրամ ուղարկել, կա՛մ գրքեր՝ ինչ լեզուով որ ուզեն եւ ինչ գիրք ուզեն, բայց պատասխան չստացայ, երեւի նամակս կորաւ ճամփին: Դու կարող ես Թիֆլիս որեւէ ծանօթ մարդու գրել, որ գիր ու գրականութեան հետ գործ ունի. թող որոնեն, գտնեն, գինը քեզ յայտնեն»¹⁸: 1921 թ. բանտարկուած, ապա հայրենիքից տարագրուած լուսաւորութեան եւ արուեստի նախկին նախարարին դժուար թե չճանաչէին Տփղիսի խմբագրութիւններում: Եւ նամակի անպատասխան մնալու պատճառ կարող էր լինել նաեւ այդ հանգամանքը, թե եւ հակուած ենք մտածելու մարդու բարոյական կերպարի մասին առաւել բարձր կարծիք ունեցող Աղբալեանի պէս, թե երեւի նամակը կորել է:

Այս կամ այն գիտնականի արհեստավարժութեան, նրա գրքի, ուսումնասիրած լեզուի հմտութեան աստիճանի մասին գիտական աշխարհի մեծ հեղինակութիւնների գնահատող կամ ծաղրող խաւսքը (որքան էլ ծաղրանքով խաւսելը կարծես յարիր չէ լուրջ գիտնականին) մի կողմից զգաստացնում է ամէն մի քննախոյզ ուսումնասիրողի, մեւս կողմից՝ կողմնորոշում ասպարէզում եղած գիտական գրականութիւնից անհրաժեշտը ձիշդ ընտրելու: Եւ թերեւս ծաղրելի չլինելու Աղբալեանի ձգտումն ու գիտական իսկապէս արժէքաւոր գրականութիւնը ձեռք բերելու նպատակադրումը զուգակցուած են նամակի հետեւեալ հատուածում. «Գերմաներէն կայ մի փոքրիկ քերականութիւն, բայց հեղինակը հմուտ չէ վրացերէնին, եւ Մառը իր մի գրուածքում այդ տեսակներին բաւական ծաղրում է»¹⁹: Եւ անմիջապէս միտքը շարունակում է յայտնաբերած լեզուական արինաչափութիւնների պարզեւած անթաքոյց ոգեւորութեամբ ու իր նոր տեսութեան առարկայական գնահատմամբ. «Ես այնքան սերտ կապ եմ գտած վրացերէնի եւ հայերէնի միջեւ, որ պիտի զարմանան ամէնքը, երբ աշխատութիւնս լոյս տեսնի, դրա համար իմ իմացած բառերը քիչ են. մի 100-200, որքան կը յիշեմ: Պէտք է բառարան, որ բառ բառի դէմ բռնեմ: Այդ նմանութիւնը գտնելու համար ես **նոր տեսակէտ մշակեցի** (ընդգծումը մերն է – Լ. Ա.) մեր հնչիւնների մասին, որ հաստատուում է հազարաւոր փաստերով. երբ այսպէս լու-

18 **ԳԱԹ**, Ն. Աղբալեանի հաւաքածոյ, Գ. 3839-19 (**Անանյան Գ.**, նշ. աշխ., էջ 344):
 19 **ԳԱԹ**, Ն. Աղբալեանի հաւաքածոյ, Գ. 3839-21 (**Անանյան Գ.**, նշ. աշխ., էջ 344):

ծում ենք հայոց բառերը՝ նրանք մի կողմից մօտենում են վրացերէնին, միւս կողմից հին ուրարտական բառերին, որով հայերը ոչ թէ ձուլուած են եւ հայ դարձած, այլ մեր լեզուն հէնց ուրարտերէն է որ կայ՝ միայն խիստ ձեւափոխուած: **Եւ այդ ուրարտերէնն էլ հնդիկ-երոպական լեզու է** (ընդգծումը մերն է – Լ. Ա.)»²⁰:

Աղբալեանը, փաստարէն, իր տեսութեամբ նաեւ համարձակարէն ընդգծում ու վերահաստատում է ուրարտացիներին՝ հայ եւ ուրարտերէնի՝ հայերէն լինելու փաստը, որ ինչպէս իր ժամանակ, այնպէս էլ մինչ արս վիճելի են համարում աստարները հասկանալի պատճառներով եւ շատ հայ պատմաբաններ ու լեզուաբաններ անհասկանալի պատճառներով: Նիկողայոս Ադոնցը Ուրարտուին նուիրուած իր ուսումնասիրութեան մէջ (լոյս է տեսել մահուանից 4 տարի անց՝ 1946 թուականին, փրանկերէն), որ բազմահատոր ստուարածաւալ աշխատասիրութեան մի մասը պիտի կազմէր, ակնարկելով հանդերձ, որ իր աշխատութեան նպատակը ուրարտական սեպագրերի վերծանումը չէ, **անգամ դրա հնարաւոր լինելու դէպքում**, նշում է. «Ուրարտագիտության ներկա դրությամբ ... անհնար է տալ տեքստերի լրիվ թարգմանությունը»²¹: Ուրարտագիտութիւնը դեռ պատրաստ չէր ընթերցելու ուրարտական սեպագրերը: Թե եւ Մխիթարեան միաբաններից Յ. Սանտալձեանը²² իր հրապարակումներով բերում էր զուգահեռներ ուրարտական բառերի եւ դրանց ներկայ հայերէն համարժէքների միջեւ: Գր. Ղափանցեանը 1940 թ. լոյս ընծայեց իր «Ուրարտուի պատմութիւնը» աշխատութիւնը՝ սեպագիր լեզուն համեմատելով խեթերէնի եւ հայերէնի հետ: Աւելի ուշ Գ. Ջահուկեանը ուրարտական արձանագրութիւններից դուրս բերեց այնպիսի քանակի եւ որակի հնդ-երոպական արմատներ, քերականական մասնիկներ ու այդ տարրեր, որոնք անհնար էր ունենալ սովորական փոխառութեամբ կամ ենթաշերտային ազդեցութեամբ: Մինչդեռ գիտնականների մի մասը ուրարտերէնը համարում էր վրացերէնի նախնական տարբերակը, մի մասն էլ հեռացնում էր հնդ-երոպական

20 Նոյն տեղում:

21 **Ադոնց Ն.**, Երկեր հինգ հատորով, Քննական պատմություն Հայոց, հատ. Դ, Եր., 2009, էջ 172:

22 **Յովսէփ վարդապետ Սանտալձեան** – Մխիթարեան միաբան, որի աշխատութիւնները լուսաբանում են նախաքրիստոնէական Հայաստանի պատմութիւնը: Շատ լուրջ փորձեր է արել՝ հայերէնով մեկնելու ուրարտական սեպագիր արձանագրութիւնները (տես «Ասորեստանէպ եւ պարսիկ սեպագիր արձանագրութիւնք», Վիեննա, 1901):

ընտանիքից՝ առանձին լեզուաընտանիք յատկացնելով խուռիերէնին ու ուրարտերէնին:

Բ. Սկզբունքներ

Իր տարբեր յաւդուածներում Աղբալեանն անդրադառնում է ուրարտերէն կոչուող հայերէնին՝ բոլոր զուգորդումներով հիմնաւորելով, որ այդ լեզուն առաւել հին հայերէն է, որի հնչիւնական, շեշտափոխական եւ այդ իրողութիւնների պատմական հոլովոյթը չքննելու դէպքում այսարուայ հայերէնից հեռու մի լեզու ենք գտնում: Իր համեմատական լեզուաբանութեան շրջանակներում Աղբալեանը, գիտակարգի արդէն գործող կերպաբանութեանն ու սկզբունքներին հետեւելով հանդերձ, նոր սկզբունքներ է առաջարկում խնդիրները լուսաբանելու համար: Դրանք են.

ա. Բառերի ու ձևերի անխաթար կերպարանքի սկզբունքը: Ըստ նրա տեսութեան՝ նախնական կազմութիւնները լիաձայն էին, եւ իւրաքանչիւր բաղաձայն յենուած էր մի ձայնաւորի: Ուրեմն ձայնաւորների սղումն ու չքացումը յետագայ շրջանի երեւոյթներ են:

բ. Ձայների ձուղման սկզբունքը: Լեզուում կան հնչիւններ, որոնք յետագայ ձուղման արդիւնք են, այսինքն՝ կան հին ու նոր հնչիւններ, պարզերը հին են, ձոյղ հնչիւնները՝ նոր, ինչպիսին է, ւարինակ, **g** հնչիւնը, որը **տ** եւ **ս** հնչիւններն անջատակցող մի ձայնաւորի անկման պատճառով նրանց ձուղման արդիւնքն է, ինչպէս՝ արտասուք – արտսուք – արցու(ս)ք:

գ. Շեշտի սկզբունքը: Շեշտն է պատճառը ձայնաւորների սղման կամ կորստի, ինչպէս նաեւ բաղաձայնների կամ ձայնաւորների ձուղման, ինչպէս՝ *հատի՛ս – հա՛տիս – հատս – հաց:

դ. Լծորդ ձայների սկզբունքը: Լեզուական տարբեր միջավայրեր հնչական տարբեր արտայայտութիւններ ունեն, ուստի գոյութիւն ունեն նոյն արմատի, ւարինակ, **գ**-ով, **կ**-ով եւ **ք**-ով տարբերակներ տարբեր բարբառներում:

Սկզբունքներից բացի՝ Աղբալեանը տալիս է կերպաբանական (methodological) ցուցում. **արտաբոլստ իրար ոչ նման բառերը ծագումնաբանաւորէն կարող են նոյնը լինել:** Բառաձևերը քննելիս պէտք է մտովի կառուցել այն բոլոր հնարաւոր կերպարանքնե-

րը, որ դրանք կարող էին ստանալ իրենց բաղադրիչ տարրերի լծորդական այդափոխութեան, ձայների ձուղման, ինչպէս նաեւ տարբեր շեշտառութեան հետեւանքով²³:

Լեզուական բոլոր իրողութիւնները Աղբալեանն անցկացրել է սեպհական տարրաբանական փորձանալթով՝ վերլուծութեան եւ համադրութեան իր կերպարանութեամբ բացատրելով դրանց պատճառն ու ծագումը: Լեզուական երեւոյթները բացատրելիս նա ոչ միայն հանդէս է գալիս իր յստակ դիրքորոշմամբ, այդ եւ յընթացս իր տեսութեան շարադրում-ներկայացնում է նա եւ այդ դիրքորոշումը: Նա յաճախ հակադրում է հոշակաւոր լեզուաբանների կարծիքներին, որոնց վրայ նրանք տեսութիւն են կառուցել, եւ փաստարկելով բացատրում առաջարկուած տեսութիւնների անհիմն ու խոցելի լինելը: Այդպէս իր տեսութիւնն է ներկայացնում՝ մէջտեղ բերելով, արիւնակ, բարբառների շեշտի մասին իր արժէքաւոր ուսումնասիրութիւնը²⁴ որպէս առարկութիւն Հ. Աճառեանի նկարագրած բարբառային շեշտի²⁵: Թերի է նկատում, արիւնակ, Անտուան Մէլի՝ «հինգ» եւ «յիսուն» բառերի տարածեւութեան պատճառի բացատրութիւնը²⁶ բարբառների գործաւնն ընդգծելով եւ փաստարկումներով համոզելով, որ պատճառն այդ իսկ տեսութեան թերի լինելն է. «Այստեղ մի թերի բան կայ, որ մեկնութիւնները դարձնում է առարկելի: Այդ թերութեան պատճառն այն տեսակէտն է, որից նայում են հայոց լեզուին: Գրաբարն է միայն, որ քննութեան եւ համեմատութեան է դրւում, քանի որ հին բարբառների մնացորդներ չունինք, ինչպէս ունի օրիւնակ յունարէնը: Ուստի ես ասում եմ. երբ միեւնոյն բարբառի կամ լեզուի մէջ միեւնոյն բառը կամ ձեւը **երկու** տարբեր կերպարանքով է երեւում՝ դրանցից մէկը կամ միւսը **փո-**

23 Տե՛ս **Աղբալեան Ն.**, Բանասէրի յուշագիրը, հատ. Ա., պրակ ԺԱ., էջ 195:

24 Տե՛ս **Աղբալեան Ն.**, Դիտողութիւններ Հայոց լեզուի մասին, «Հայրենիք», Պոսթըն, 1928, N Դ, էջ 79-85, N Ե, էջ 67-75, N Զ, էջ 144-153, N Ը, էջ 87-96, N Թ, էջ 98-106, N Ժ, էջ 91-100, N ԺԱ, էջ 138-145, N ԺԲ, էջ 145-149, 1929, N Ե, էջ 157-165 (ընդհանուր շուրջ 80 էջ):

25 Տե՛ս «Եմիւնեան ազգագրական ժողովածոյ», հրատարակութեամբ Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, հատ. Ը. Հայ բարբառագիտութիւն. ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով), գրեց **Հր. Աճառեան**, Մոսկուա – Նոր Նախիջեւան, ՌՅԿ – 1911: Բարբառային շեշտի մասին Հ. Աճառեանի աշխատութեանը Ն. Աղբալեանը ծանալթացել է «Եմիւնեան ազգագրական ժողովածոյի» հատորներից մեկում: «Դիտողութիւններ Հայոց լեզուի մասին» յաւորածաշարի առաջին մասում Աճառեանի մէջբերումը ծանալթագրում է. «Գիրքը, որից քաղած եմ այս վկայութիւնը, կող չունի, ուստի վերնագիրը չեմ դրել. գիտեմ, որ Եմիւնեան ազգագրական ժողովածոյի հատորներից մեկն է. բայց որը՝ չեմ կարող ասել» («Հայրենիք», 1928, N Դ, էջ 82):

26 Մէլի բացատրութիւնը տես **Մելե Ա.**, Հայերենագիտական ուսումնասիրութիւններ, Եր., 1978, էջ 146-147:

խառնություն է: Հնչապէս տարբեր, բայց մերձիմաստ բառերը նախապէս եղած են նոյնիմաստ, բայց տարբեր բարբառների մէջ»²⁷:

Լինելով համեմատական լեզուաբանութեան համարձակ առաջամարտիկ՝ Աղբալեանը շատ գծերով ոչ բաւարար ու անկատար է համարում հնդերոպաբանութիւնը եւ արինակներով բացատրում դրա թերութիւնները: «Բանասէրի յուշագիրը» գրքում կարդում ենք. «Իմ տեսութիւնը համաձայն չէ հնդերոպական լեզուագիտութեան: **Հնդերոպական լեզուագիտութեան մշակած տեսողութիւնը մարդկային իմացութեան վերջին խօսքը չէ**, եւ ընդհանրապէս գիտութեան մէջ չկայ եւ չի կարող լինել յարատեւ վերջին, բայց մանաւանդ վերջնական խօսք, քանի դեռ մարդկութիւնն աճում է անընդհատ, եւ նոր սերունդները իրերի բերումով նոր դիրքերի վրայ կանգնելով՝ նոր տեսակէտից են նայում կեանքին ու աշխարհին: Մեր պարտքն է անմիջաբար եւ յարատեւ շփում ունենալ կենսական փաստերի հետ, որոնց շարքին են պատկանում լեզուական հին ու նոր երեւոյթները, եւ մեր դիտողութիւններն ու կռահումներն արձանագրել: Հաւանականն այդ կռահումներից կը համարուի «վերջին խօսք», մինչեւ երեւան նոր եւ ատլի հաւանական «վերջին խօսքեր»: Աննախապաշար իմացութեան համար փաստերի ստուգութիւնը եւ դատումների ճշդութիւնը բաւական են ինքնին: **Գիտութեան համար կուռքեր գոյութիւն չունին եւ պէտք չէ որ ունենան: Ինչ որ համոզիչ է՝ ընդունելի է: Ծճարտութեան չափանիշը իր համոզական կարողութեան մէջ է:** Ինձ թում է, որ տեսութիւններս համոզական են: Նրանք կարող են հաստատուիլ, լրացուիլ կամ մերժուիլ. դրանից ես չեմ տուժի, իսկ ճճարտութիւնը կը շահի: Այս համոզումով է, որ գրի եմ առնում դիտողութիւններս ու կռահումներս, որ եթէ չընդունուին իսկ՝ գոնէ առիթ կը տան հերքումի, հետեւապէս նոյն խնդիրները վերաքննելու, ինչ որ ինքնին մեծ շահ է մեր լեզուի ճանաչման համար»²⁸:

«Սիոն»-ի 1937 թ. ԺԱ համարի էջերում ուշագրաւ մի գրախաւսական կայ. հանդէսի խմբագրի՝ Թորգոմ Գուշակեանի գրախաւսականն է «Բանասէրի յուշագիրը» աշխատութեան արդէն լոյս տեսած պրակների մասին: Հիացմունք, խանդավառութիւն, գիտա-

27 Աղբալեան Ն., Բանասէրի յուշագիրը, հատ. Ա., պրակ Դ., էջ 65:

28 Նոյն տեղում, պրակ Ա., էջ 2-3:

կան նոր լոյսի յայտնագործութեան զմայղանք կայ տողերում եւ համարձակ տեսութեան ու նրա հեղինակի անկաշառ, առարկայական գնահատական: Նշանակալից երկու հանգամանք է ընդգծում գրադատը՝ **գիտական տրամաբանութեան լոյսը**, որով առաջնորդուել է Աղբալեանը լեզուի ամենամութ բաւիղներում իր պրպտումները կատարելիս, եւ այն **անխախտ սկզբունքը**, որ լեզուների մէջ չկայ մի երեւոյթ, որ ծնունդը չլինի որ եւ է արեւնքի: Գուշակեանը հիանալի կերպով կարողացել է գտնել Աղբալեանի գիտութեան առանձնայատկութիւնը, նրա մտածողական կերպի ամենաբնորոշ գիծը: Նա մատնանշում է, թե որտեղից է գալիս աղբալեանական գիտութեան լոյսը: Մէլէի, Կարստի եւ ուրիշների ուսումնասիրութիւններից բացի, լեզուների համեմատական գիտութեան աղբերներից ատելի՝ այդ լոյսը գալիս է «դիտելու եւ վերլուծելու իրեն ինքնայատուկ կերպէ մը, դատելու այն համարձակութենէն, զոր ինքզինքին պիտի չկարենար արդարեւ չթոյլատրել որ եւ է ինքնավստահ խորհող»²⁹:

Երկու հատորով լոյս տեսած «Բանասէրի յուշագիրը» գիրքը իւրարիմակ գործ է, խորագրի գեղարուեստական փաթեթաւորմամբ ներկայացած լուրջ ու անշրջանցելի գիտական աշխատասիրութիւն: Վերնագիրը, որ թոյլ է տալիս մտածել, թե յուշագրութեան ժանրի ստեղծագործութիւն է կամ գուցէ արագրութեան պէս մի բան, միաժամանակ յուշում է, որ այն խորհրդաւոր յիշատակարան է, որում պիտանի շատ բան է արձանագրուած: Իսկ հեղինակը ներկայանում է որպէս միջնադարի մի դպիր, որ դարերի հեռուից խաւսում է իր մատեանը երկիւղածաւրէն ձեռքն առնողի հետ: Վերջինս այնտեղ կը գտնի միջնադարեան մի յիշատակարան. «Ես յոյս չունիմ, որ կարենամ յօրինել այն գիրքը մեր լեզուի մասին, որ մտադիր էի: Տարիներս անցած են. մտաւորական երկարատեւ ճիգը յոգնութիւն է բերած եւ հին ու օտար լեզուների անագան ծանօթութիւնս կասեցնում է վստահութիւնս: Բայց այդ շէնքի կառուցման համար տարիների ընթացքին ես տաշած եմ քարեր եւ հաւաքած եմ ատաղձ, որոնց լեզուն է՛ս միայն կարող եմ հասկանալ: Դրանք կարող են օգտակար լինել յետագայ կառուցողներին, ուստի որոշեցի գրի առնել **մտածումներս** եւ լոյս ընծայել հատուածաբար: Պիտի խնդրեմ

29 **Գուշակեան Թ.**, Բանասէրի յուշագիրը, Աղբալեան Ն., «Սիոն», Երուսաղէմ, 1937, N Ժ, էջ 318:

նրանց, որ առիթ կունենան օգտագործելու այս քարերն ու ասաղձը՝ **չնոռանան յիշատակել հաւաքողին** (ընդգծումը մերն է – Լ. Ա.)»³⁰:

Լուսինէ Ա. Աւետիսեան – հեղինակ է գրականագիտական, լեզուաբանական–բառաստուգաբանական, միջգիտակարգային աշխատությունների, բազմաթիւ յաւորածների եւ գրքերի: Հետաքրքրությունների ծիրում են դասական ուղղագրութեան՝ մաշտոցեան հիմնաւրինակի վերականգնման, գրաբարի վերածնութեան, արեւմտահայերէնին ՀՀ պետական լեզուի կարգավիճակ շնորհելու խնդիրները եւ այլն:

Ել. huugէ՝ lusineavetisyan@ymail.com

Summary

THE LINGUIST AND THE PHILOSOPHER OF LANGUAGE

To the 150th anniversary of the birth of Nikol Aghbalyan

Lusine A. Avetisyan

Candidate of Sciences in Philology

Key words - Aghbalyan linguist, the old and new sounds of Armenian, a new point of view about the sounds of Armenian, accent of dialects, Urartian is the same Armenian, origin and etymology of words.

The philological and linguistic heritage of the literary critic, teacher, public figure, ideologist Nikol Aghbalyan has almost gone unnoticed by researchers. However, the serious observations and the fundamental results achieved through the peculiar research methodology conducted by this great Armenologist are of utmost importance not only to linguistics and Armenology but can be very useful for new discoveries in the fields of philosophy of language, philosophy and psychology of the nation, for cultural studies and many other scientific branches.

This introductory article presents Nikol Aghbalyan in several essays: as a linguist, as one of the pioneers of comparative linguistics and a dissenting and zealous Armenologist.

30 **Աղբալեան Ն.**, Բանասէրի յուշագիրը, հատ. Ա., պրակ Ա., էջ 1:

The article reflects upon at the prehistory of Aghbalyan's linguistic studies, shows his attitude to Indo-European studies, and the completely new theory proposed by him, in his own assessment - some of his conclusions, one of which is that the Armenians did not become Armenians as a result of assimilation, but the Armenian language is the same Urartian, only heavily modified. **And the Urartian is also an Indo-European language** (emphasis by L. A.).

In his articles, he thoroughly studied the phonetics of the Armenian language, dialect stress and due to that the historical phonetic changes, that resulted in the dialect variants with which the language was supplemented during the formation of the nation from different Armenian tribes acquiring words with different meaning, but of the same origin, such as the words "grain" and "bread".

Particular attention was paid to simple and compound sounds, the examples entirely showed that there are old and relatively new sounds in the language, and that the latter appeared as a result of the synthesis of two simple sounds, which, due to the reduction of a vowel between them, turned out to be next to each other.

A large and important part of Agbalyan's scientific works are his etymological articles, which not only supplement the research and hypotheses of other linguists, but also often object to them and substantiate their own remarks with new conclusions.

ЛИНГВИСТ И ФИЛОСОФ ЯЗЫКА

К 150-и летию Никола Агбаляна

Лусине А. Аветисян

Канд. филол. наук

Ключевые слова - Агбалян-лингвист, старые и новые звуки армянского языка, новая точка зрения на звуки армянского языка, акцент диалектов, урартский – это тот же армянский язык, происхождение и этимология слов, «язык мыслит как спиритуалист».

Филологическое и лингвистическое наследие литературоведа, педагога, общественного деятеля, идеолога Никола Агбаляна почти осталось без внимания исследователей. Но в работах этого арменоведа есть очень серьезные наблюдения: у него своеобразная принципиальная методология с собственными фундаментальными результатами, которые нельзя и неразумно обойти. Они могут быть очень полезными не только для лингвистики и арменоведения, но и для новых открытий в сферах философии языка, философии и психологии нации, культурологии и многих других научных отраслях.

Эта статья в нескольких очерках представляет Никола Агбаляна – лингвиста, одного из пионеров сравнительного языкознания, своеобразно мыслящего арменоведа.

В статье вкратце описана предыстория лингвистических исследований Агбаляна, его отношение к исследованиям индоевропейских языков, и предложенная им – по его собственному мнению – совершенно новая теория. Один из выводов этой теории заключается в том, что армяне стали армянами не в итоге ассимиляции, и **армянский язык – тот же урартский**, только сильно видоизмененный. И этот **урартский язык также является индоевропейским языком**.

В своих статьях Никола Агбалян тщательно исследовал фонетику армянского языка, ударение в диалектах, исторические фонетические изменения в зависимости от ударения и возникшие диалектные ва-

рианты слов, которые дополняли язык разных армянских племен в период формирования народа, приобретали разные значения, но имели то же происхождение, что и, например, слова, обозначающие «хлеб» (հաց) и «зерно» (հաւ).

Особое внимание было уделено простым и составным звукам, на примерах основательно было показано, что в языке существуют старые и относительно новые звуки, и что последние появились в итоге синтеза двух простых звуков, которые по причине сокращения того или иного гласного между ними, оказались рядом друг с другом.

Большую и важную часть научных трудов Агбаляна составляют его этимологические статьи, в которых он не только дополняет исследования и гипотезы других лингвистов, но и часто возражает им и обосновывает свою точку зрения и собственные замечания новыми выводами.

REFERENCES

1. “Yeminean azgagrakan zhoghovats’oy”, hratarakut’eamb Ghazarean chemarani arewelean lezuats’, hat. Ė. Hay barbaragitut’iwn. uruagits yew dasaworut’iwn hay barbarneri (barbaragitakan k’artēsov), grets’ **Hr. Acharean**, Moskua – Nor Nakhijewan, RYK – 1911 (**In Armenian**).
2. **Acharean H.**, Hayerēn armatakan bararan, hat. A., Yer., 1926 (**In Armenian**).
3. **Acharean H.**, Hayots’ andznanneri bararan, hat. A., Yer., 1942 (**In Armenian**).
4. **Acharyan H.**, Yerb L dardzav GH, “Teghekgagir Haykakan SSR gitut’yunneri akademiayi”, Yer., 1948, ėj 33-40 (**In Armenian**).
5. **Adonts’ N.**, Yerker hing hatorov, K’nnakan patmut’yun Hayots’, hat. D, Yer., 2009 (**In Armenian**).
6. **Aghayan Ė.**, Hayereni hnch’uyt’ayin hamakargi patmut’yunits’, “Patmabanasirakan handes”, Yer., 1961, N B, ėj 67-90 (**In Armenian**).
7. **Aghbalean N.**, Banasēri yushagirē, hat. A., Pērut’, 1937-1938 (**In Armenian**).
8. **Aghbalean N.**, Ditoghut’iwnner Hayots’ lezui masin, “Hayrenik’”, Boston, 1928-1929 (**In Armenian**).
9. **Ananyan G.**, Ėntrani, Yer., 2005 (**In Armenian**).
10. **Awetisean L.**, Yerb yaytatsuum ē mashtots’ean tramabanutiwnē, Yer., 2018 (**In Armenian**).
11. GAT’, N. Aghbaleani hawak’atsoy, G. 3839-21 (**In Armenian**).
12. **Gushakean T.**, Banasēri yushagirē, Aghbalean N., “Sion”, Yerusaghēm, 1937, N ZH (**In Armenian**).
13. **Gyulbudaghyan S.**, Hayereni ughghagrut’yan patmut’yun, Yer., 1973 (**In Armenian**).

14. **Mak'sudean Mesrop vrd.**, *Yeghanim* bayi krats p'op'okhut'iwnnerč, "Ararat", Ējmiatsin, 1915, N B-G, ėj 248-253 (**In Armenian**).
15. **Muradyan H.**, Hayots' lezvi patmakan k'erakanut'yun, hat. A. Hnch'yunabanut'yun, Yer., 1982 (**In Armenian**).
16. **Meye A.**, Hayagitakan usumnasirutyunner, Yer., 1978 (**In Armenian**).